

Է.

ԳԱՏԸ ԳԻԻՂ

Աշխարհագրական հնաւանդ սովորութեան դէմ խօսած չըլլալու համար՝ պարտաւոր ենք ըսել, թէ այս գիւղն ալ ունի իւր արեւելքն, արեւմուտքն, հիւսիսն եւ հարաւն. բայց մեր խիղճն ալ յարգելու համար՝ կը ստիպուինք խոստովանելու, որ արեւելքին, արեւմուտքին եւ հիւսիսին գոյութիւնն անուանական է. հարաւն է միայն, որ կտիրէ այս գեղին վրայ: Հիւսիսն իսկ եթէ երբեմն քանի մը խօսք ընել ուզէ՝ հարաւին բերնով կ'իսօսի: Արեւն հոս հարաւային կողմէն կ'ելնէ եւ հարաւային կողմէ կ'մտնէ, վերջապէս ամեն բան հարաւ է հոս:

Այս տողերը գրելով մեր նպատակն է իմացունել արգոյ հասարակութեան, որ ձմեռուան եղանակին մէջ այս գիւղն երթալ փափաքողներն ամառուան հագուստ հագնելու են. իսկ ամառուան տաք օրերուն մէջ երթալ ուզողները մերկ երթալու են հոն, այսինքն *տէքօլթ* հագնելու են:

*Մահուսիյէ*ի ընկերութիւնն իւր ճամբորդները զովացնելու համար է, որ այնպիսի ձեւով շոգենաւներ կ'բանեցունէ, որոնք միշտ ծովու ալիքներ կ'ընդունին իրենց մէջ, որով ճամբորդները ծովու ջրով կ'լուացուին եւ կը զովանան: Եթէ այս չըլլար՝ ճամբորդները տաքէն կ'մարէին:

Այս գիւղն այնչափ օրհնեալ գիւղ մ'է, որ քանի մը տարիներէ առաջ, երբ հրէային մէկը գուշակութիւն ընելով ըսաւ, թէ գետնին տակ պիտի անցնի այն գիւղն, որու անուան սկզբնատառը *զ* է՝ ամեն մարդ միաբերան պօռաց, թէ Գատը գիւղն ըլլալու է այդ գիւղը: Հրէային գուշակութիւնը չելաւ, բայց ի՛նչ օգուտ, գեղին պատիւը հրապարակի վրայ կոտրեցաւ: Այն թուականին ըսողներ ալ գտնուեցան, որ այս լուրը տարածողները մեր կեսարացի ազգայիններն էին, որոնք աժան գնով տուն վարձելու համար հնարած էին այդ լուրը: Եւ արդարեւ, տուներուն գիները հարիւրին վաթսուն իջան. շատ մը վաճառականներ իրենց առնելիքն ուզեցին գեղիս մէջ նստող վաճառականներէն. շատերը հեռացան գեղէն. իսկ մեր կեսարացի ազգայիններն իրենց նստած տեղէն չշարժուեցան, *թող աժան նստինք ու գետնին տակն անցնինք*, ըսելով:

Այս գեղին մէջ թէպէտեւ երեքհարիւր յիսուն տուն հայ կայ, բայց բնիկ ազգային հազիւ քսաներեք ու երեք քառորդ մարդ կայ. մնացածն այլեւայլ թաղերէ գաղթած է: